

ԲԱՅԻ ԼՐԱՅՈՒՄՆԵՐԸ ՆԱԽԴՐԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐՈՎ

Գ. Ս. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Գրաբարում նախդրային կառույցները հիմնականում բայական լրացումներ են. այդպիսիք կազմավորելու համար առկա է փոխկապակցված մի ուշագրավ գործընթաց, որտեղ էական դեր ունեն **բայը, թեք հոլովները, հոլովվող բառը և համապատասխան նախդիրն ու նախադրությունը**:

Բայն իբրև խոսքի մաս ունի **երեք հիմնական հարկանիշ՝ բայինասպ, սեռ և խնդրատություն**: **Բայինասպը բայական կամ գործողության իմաստն է, իսկ «խնդրատությունը բայի այն առանձնահատկությունն է, որի համաչափ նրանք իրենց իմաստի կամ սեռի թելադրանքով պահանջում են զանազան խնդիրներ և պարագաներ»**¹:

Բայական սեռը բայի ներքին հատկանիշն է, որը ցույց է տալիս «**գործողության առարկայական ելակետի և վախճանակետի փոխհարաբերությունը**»²:

Բայինասպը միատարր չէ, քանի որ կան **մենիմասպ, բազմիմասպ**, այդ թվում նաև **հոմանշային** կիրառություններ և **փոխաբերաբար գործածվող բայեր**:

Նկատելի է, որ մենիմաստ և ոչ տարածուն իմաստներ ունեցող բայերը հիմնականում կա՛մ նորակազմություններ են, կա՛մ փոխառություններ:

Առավել շատ են բազմիմաստ բայերը, իհարկե, տարբեր աստիճանավորմամբ: Օրինակ՝

Անցանել չեզոք սեռի բայն ըստ ՆՀԲ - ի ունի ավելի քան 10 իմաստային դրսևորումներ³, իսկ ըստ Ռ. Ղազարյանի Հոմանիշների բառարանի՝ 10 հոմանշային տարբերակներ⁴: Եզնիկի, Եղիշեի և Խորենացու երկերում **անցանել** բայի պահանջով **նախդիր + թեք հոլովներ** կառույցներով կան մի քանի գործածություններ, որոնք հիմնականում **ոճական կիրառություններ են**:

Եզնիկը գրել է. «Յորժամ մարդն զԱստուծոյ պատուիրանան անց»⁵ (էջ 71, հմմտ. էջ 152), այսինքն՝ **պատվիրանը խախտել**:

Եղիշեն այս բայի մույն իմաստը կից շարադրանքում ներկայացրել է գործիական հոլովով, սակայն տարբեր նախդիրներով՝ ստեղծելով գրելաոճի բազմաձևություն:

Նկատի ունենալով պարսիկներին՝ ասվում է. «Դուք սովոր էք անցանել **ըստ հրամանաւ** քազաւորին ձերոյ»⁶: Իրենց նկատի ունենալով՝ հայ

¹ Գ. Մակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Եր., 1955, էջ 291:

² Ա. Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, Եր., 1976, էջ 95:

³ Տե՛ս «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի», Վենետիկ, 1836, հ. Ա, էջ 248 (այսուհետև՝ ՆՀԲ, Ա և էջը):

⁴ Տե՛ս Ռ. Ղազարյան, Գրաբարի հոմանիշների բառարան, Եր., 2006, էջ 78:

⁵ Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, Վենետիկ, 1826 (այսուհետև՝ Եզն. և էջը):

⁶ Եղիշե, Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, Եր., 1957, էջ 171 (այսուհետև՝ Եղ., և էջը):

հայրենասեր հոգևորականներն ասում են. «Այլ մեք ոչ կարենք անցանել **զհրամանաւ** մերոյ թագաւորին» (Եղ., 171):

Եղիշեի երկում ևս **անցանել** բայը **բար + հայցական** կառույցով դրսևորվել է նույն իմաստով, իսկ **բնդ + հայցական** կառույցով՝ այլ իմաստներով (ՆՀԲ, Ա, 248):

Ահ արկաներ ամենայն քրիստոնէութեան՝ **բնդ որ** անցաներ (Եղիշե, 141): Անցանել **բնդ սահմանս** Վրաց (Եղ., 74):

Ոչ երբէք անցանեն **բար** եղեալ **սահմանն** (Եղ., 35):

Եզնիկն ու Եղիշեն **զ+ գործիական** կառույցով կազմել են **մի բանից այն կողմ անցանել** իմաստը:

Լուսինն յորժամ անցանէ **զարեգականք** սկսանի տակաւ նուազել (Եզն., 201):

Ի բարձրաթռիչս եղեալ՝ **զամենայն վնասակար մրրկածին օղովք** անցանիցենք (Եղ., 5):

Այսպիսով՝ հատկապէս վերացական գոյականների հայցական և գործիական հոլովների հետ **զ, բար** նախդիրները ոճական արժեքով նշանակում են **զանց առնել, խախտել, չկատարել** իմաստներ, իսկ **բնդ + հայցական** կառույցով դրսևորվում է այլ իմաստ՝ **որով, որի միջով, որպէնով**:

Խորենացին ևս **անցանել** բայը թեք հոլովների հետ գործածել է տարբեր նախդիրների զուգակցմամբ⁷.

1. **Առ, ի (յ) + հայցական՝ դեպի իմաստով (ուղևորման հայցական).**

Անցանել **առ Խոսրով** (314): Անցանել ... **յերկիրն** Յունաց (298):

2. **Ընդ + հայցական՝ գործիական, բացառական հոլովների իմաստով:**

Անցանել **բնդ Եփրատ** (132):

3. **Չ + գործիական՝ զանց առնել իմաստով:**

Անցի **զհրապու** (30), (= խրատը զանց առնել): Աղէտք անցին **զամենքումքք** (126), (= աղետները գերազանցեցին բոլորից):

4. **Ընդ + գործիական՝ մի պեղից մեկ այլ պեղ անցնել:**

Ընդ աշխարհն Աբգարու անցանել (143), (= Աբգարի երկրով անցնել):

Եւ անցեալ որպէս զարծուի սրաթև **բնդ զեպն** (178):

Սակայն բազմաթիվ բայեր իմաստային առումով բազմանշանակ են, հետևաբար ունեն գլխաբառի հիմնական նշանակությունից աստիճանաբար հեռացող հոմանիշներ:

Այսպէս, **ասել** (ն) բայն ունի 13 նշանակություն, որոնցից 12-ը հոմանիշներ են, իսկ մեկը փոխաբերություն է:

ՆՀԲ-ում **ասել** բայի հիմնական նշանակություններն են՝ **ոգել, բարբառնել, խօսել**:

Այնուհետև մանրատիպ տառերով ներկայացած են այս բայի մյուս նշանակությունները՝

1. Պատմել, ճառել, 2. անուանել, կոչել, ընծայել, 3. նշանակել, հաստատել, 4. հարցանել, 5. պատասխանել, 6. պատուիրել, պատուել տալ,

⁷ Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, Տիգրիս, 1913 (այսուհետև՝ Խոր., և էջը):

7. վարդապետել, քարոզել, 8. արտասանել, արտաբերել, 9. երգել, 10. խօստանալ, 11. համարել, 12. «խօսել հաու» (=աքաղաղը կանչել):⁸

Քազմինասարությունը, հոմանշությունը և փոխաբերարար գործածությունները երբեմն կարող են փոխել բայի սեռը, անգամ խոնարհումը, խնդրատությունը՝ աննախդիր և նախդիր-նախադրության բազմազան կիրառմամբ, նրան հաղորդել ոճական կառույցներ կազմելու նորանոր հնարավորություններ:

Բայի սեռի վերաբերյալ կան բազմաթիվ ուսումնասիրություններ, որոնցում գրաբարի և ժամանակակից հայոց լեզվի քերականները ներկայացրել են իրարահաստատ, երբեմն էլ իրարամերժ տեսակետներ: Մ. Ա. սատրյանը, օրինակ, իր մի աշխատությունում ներկայացրել է գրաբարի 13 քերականների կարծիքները՝ եզրակացնելով՝ «Գրաբարի համար ներգործական, կրավորական, չեզոք և հասարակ սեռերի անջատումն ըստ երևույթին ավելի ճիշտ է արտացոլում մեր հին լեզվի քերականական կառուցվածքի իրական պատկերը»⁹:

Սակայն բայական սեռի տարբերակման և բնորոշման հարցում մենք հիմնականում առաջնորդվել ենք Նոր Հայկազյան բառարանի՝ *ներգործական, չեզոք, կրավորական, հասարակ* կամ *ընդհանուր (ըստ գործածության՝ ներգործական կամ կրավորական), ներգործական և չեզոք՝ և, չնշումով (այն է՝ կրկնասեռ)*¹⁰, *պարճառական և չայնակրական* (այն է՝ *կրավորակեպ չեզոք*) *բայեր* բնորոշմամբ:

Ըստ նշված սեռերի՝ բայերը հաճախ համապատասխան նախդրագործածությամբ կամ առանց նախդիրների պահանջում են խնդիրներ և պարագաներ: Հիմնականում կան ընդհանուր օրինաչափություններ՝

ա) Գերիշխում են ներգործական և չեզոք սեռի բայերը, որոնք էլ խոնարհման և խնդրատության գործընթացում դրսևորում են իրենց բնորոշ հատկանիշները:

բ) Անկախ սեռային որոշ յուրահատկություններից՝ հասարակ և կրկնասեռ բայերը խնդրառական և պարագաառության յուրաքանչյուր գործածությունում դրսևորում են նշված երկու սեռերից մեկնումնեկի առանձնահատկությունները:

գ) Ուշագրավ է նաև *ներգործական, չեզոք, երբեմն էլ հասարակ սեռի* բայերից կազմված պատճառականների խնդրատությունը: Ներգործական սեռի պահանջով հայցական հոլովով դրվում է ուղիղ խնդիր (բոլոր պատճառական բայերը ներգործական սեռի են), իսկ ներգործական սեռի բայերից կազմված պատճառականները *բացի հայցական հոլովով դրվող ուղիղ խնդրից, սրանում են նաև փրական հոլովով պարճառականության կամ միջնորդական խնդիր:*

Ինչպես ասվեց, բայի մյուս կարևոր հատկանիշը *խնդրատությունն է*, և քանի որ բայական լրացումներ՝ *խնդիրներ և պարագաներ* ձևավորելու համար էական նշանակություն ունեն *թեք հոլովները, հոլովվող բառերը, նախդիրներն ու նախադրությունները*, ուստի բայի *խնդրատությունը*

⁸ Տե՛ս նաև Ռ. Ղազարյան, նշվ. աշխ., էջ 101:

⁹ Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, Գ. եր., 1977, էջ 161:

¹⁰ «Կրկնասեռ» գիտաբարը Ա. Ա. Աբրահամյանինն է:

նպատակահարմար է քննել ոչ թե առանձին, այլ նշված հարցադրումների հետ համատեղ:

Գրաբարյան բայերի խնդրառության վերաբերյալ կան տարբեր կարծիքներ, օրինակ, Վ. Քոսյանը գրել է. «Նկատելի է նաև, որ խնդրառության տեսակետից գրաբարյան բայերը դրսևորում են անհետևողականություն. բազմաթիվ բայերի խնդրառությունը տատանվում է: Մի շարք դեպքերում նույն բայերը ստանում են տարաբնույթ լրացումներ, որոնք իմաստային տարբերություններ չունեն»¹¹:

Պետք է կարծել, որ այստեղ հաշվի չեն առնված նույն բայի բազմ-իմաստությունը, հոմանշային և որոշակի խոսքային միջավայրում դրսևորումները և փոխաբերական իմաստով գործածվելը: Քոսյանը շարունակել է. «Այսպես, *հարկանել* բայի մոտ հանգման իմաստով լրացումը կարող է դրվել *ի, ընդ* նախդիրներով և տրականով, *զ* նախդրով և տրականով, *զ* նախդրով և բացառականով, *զ* նախդրով և գործիականով, *ընդ, ի* նախդիրներով և հայցականով»¹²:

Անշուշտ, այս ոչ թե գրաբարյան բայերի դրսևորման անհեղևողականությունն է, այլ լրացումներ վերցնելու նրանց յուրահարկությունը:

Իսկապես, նույն բայով, տարբեր հոլովներով և նրանց հետ գործածված նույն կամ տարբեր նախդիրներով կազմված միևնույն կամ տարբեր լրացումներ վերցնելը *գրաբարյան բայերի իմաստային բազմազանության և նախդրագործածությանը խնդրառական լրացումներ ստանալու լայն հնարավորությունների արդյունք է, որը պարզորոշ արտացոլվել է ստորև բերվող աղյուսակներում*

ՀԱՄԵՆԴՀԱՆՈՒՐ ԱՂՅՈՒՍԱԿ

Նախդրային և պարագայական գործածություններն ըստ հոլովների
ա) ԽՆԴԻՐՆԵՐ

Դոլով-ներ	Առ	Զ	Ընդ	Ըստ	Ի ()	Ց	Ընդամենը
Ա	-	-	փոխարինության, (փոխանակ կամ փոխարին+ընդ+սեռական), երբեմն էլ՝ հանգման	-	-	-	2
Յր.	հաղորդման, հանգման, միասնության, սահմանափակման	հանգման	համապատասխանության, հանգման, միասնության, սահմանափակման, վերաբերության, ուղղության, փոխարինության	համապատասխանության, սահմանափակման	համապատասխանության	-	16
Դ	հաղորդման, համապատասխանության, հանգման, մատուցման, սահմանափակման, վերածման, ուղղության, փոխառած կապի	(զ+հայց, որոշյալություն), գործիական հոլովի իմաստ	հանգման, միասնության, միջոցի, սահմանափակման, վերաբերության, վերածման, ուղղության, փոխարինության	համապատասխանության	հաղորդման, հանգման, մատուցման, միջոցի, սահմանափակման, ուղղության, վերածման, վերաբերության, ներգործման	հաղորդման, հանգման, մատուցման	30
Բ.	սահմանափակման	վերաբերության, ուղղության	-	հարդրականության	(ի → բաց.)	-	4
Գ.	համեմատության	հանգման, ուղղության	հանգման, մատուցման, միջոցի, ներգործող խնդրի, փոխարինության	-	-	-	5
Ընդամենը	15	6	22	4	10	3	60

¹¹ Վ. Քոսյան, Գրաբարի բառակապակցությունները, Եր., 1980, էջ 90:

¹² Նույն տեղում, էջ 91-92:

բ) ՊԱՐԱԳՆՆԵՐ

Հոլով- մեք Ս.	Առ	Ձ	Ընդ	Ըստ	Ի (յ)	Ց	Ընդա- մեք
-	-	-	-	-	-	-	-
Տր.	տեղի, պատճառի, նպատակի	-	տեղի, ժամանակի	տեղի, ձևի, հիմունքի	տեղի, ժամանակի, ձևի, վիճակի	-	12
Հ.	ժամանակի, նպատակի, պատճառի, տեղի	-	տեղի, ժամանակի, ձևի	տեղի, ժամանակի	ժամանակի, ձևի, նպատակի, վիճակի, չափի	ժամանակի և ժամանակի չափի, տարածական և այլ չափի	17
Բ.	պատճառի, նպատակի	հիմունքի, նպատակի	տեղի (ի նախդիրի փոխարեն)	հաջորդակա- նության (ի նախդիրի փոխարեն)	(ի → բաց.)	-	6
Ղ.	ժամանակի, պատճառի, տեղի	ժամանա- կի, տեղի	տեղի, ձևի, վիճակի	հազվադեպ համաձայնության:	-	-	9
ընդա- մեք	12	4	9	7	10	2	44

Միևնույն հոլովով և տարբեր նախդիրներով, տարբեր հոլովներով և նույն կամ տարբեր նախդիրներով միևնույն կամ տարբեր լրացումներ ստանալը, անշուշտ, ունի նաև **ոճական նշանակություն**:

Այսպես, Փավստոս Բուզանդը գրել է. «Նա [թագաւոր] լուռ և եթ կայր, ոտն զոտամբ արկեալ, արմունկն ի ծունգ և ձեռն ի ծնօտի՝ նստաւ այսպես...»¹³:

Թարգմ.՝ «Նա [թագավորը] լուռ էր, ոտքը ոտքին զցած, արմունկը՝ ձնկանը և ձեռքը ծնոտին՝ նստեց այսպես»:

Այստեղ ոճական բազմաձևություն կա, քանի որ նույն բայի պահանջով **ի + հայցական** և **ի + պրակական** կառույցներով կազմվել են **կողմնակի փեղի պարագաներ**, ըստ որում՝ դերբայական դարձվածի գերադաս անդամը՝ **եղեալ**, զեղչված է. դերբայական դարձվածները **նստել** բայի համար ձևի պարագաներ են:

Ոճական այսպիսի բազմազանությունը յուրահատուկ է մեր 5-11-րդ դարերի ամբողջ մատենագրությանը, ըստ որում՝ այսպիսի բազմազանություն ստեղծվում է նաև նախդիրների միջոցով, որն իր բարձրակետին է հասել Գրիգոր Նարեկացու «Մատենան ողբերգութեան» երկում¹⁴:

Խնդրառության գործընթացում էական նշանակություն են սրանում նաև լրացյալ բայախմբերը և լրացում բառախմբերը:

Խնդրառության առումով կարելի է առանձնացնել **իմաստային միևնույն** և **պարբեր խմբերի** պատկանող այնպիսի բայեր, որոնց պահանջով կազմվում են նախադասության որոշակի անդամներ:

Օրինակ՝ **սասցական, իմացական և զգացական** հատկանիշ արտահայտող բայերը **զ + բացառական** կառույցով կազմում են այսպես կոչված

¹³ Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Եր., 1987, էջ 138 (այսուհետև՝ Բուզ., և էջը): (Էջ 138-ում վրիպակով տպագրված է՝ **ի ծուննդ** փխ. **ի ծունգ**):

¹⁴ Տե՛ս Գ. Մանուկյան, Նախդրագործածությունը 5-10-րդ դարերի և միջին հալիքներից հայոց չափածոյում, Եր., 2005, էջ 34-128:

պատմական բացատրական՝ մասին, վերաբերյալ իմաստների դրսևորմամբ, **պարտական գործիական** (գ+ գործիական) են կազմում տարբեր իմաստային խմբերի պատկանող **անկանել, գալ, պատել, նստել (խմ), տեղալ, ցանել և այլ բայեր**:

Հանգման անուղղակի խնդիր են վերցնում **միևնույն և տարբեր խմբերի պատկանող բազմաթիվ բայեր՝** ամուսնանալ, այցելել, անկանել, ապաստանել, ապալիմել, բախել, բարերարել, բուռն հարկանել, գթալ, գորովել, գութ ունենալ, գումարել, դիպել, դիպեցուցանել, դնել, ելանել, զարկանել, ընդ առաջ ելանել, ընդհարկանել, թագաւորել, խառնակել, խառնել, խնայել, կապել, կարել և այլն:

Մատուցման անուղղակի խնդիր պահանջող և միևնույն խմբին պատկանող բայերից են՝ աւանդել, բաժանել, բաշխել, ընծայել, կտակել, ձօնել, մատակարարել, յանձնել, նուիրել, շնորհել, պարգևել, պատարագել, վաճառել, տալ և այլն:

Մատուցման անուղղակի խնդիր պահանջող բայերը հիմնականում **ներգործական սեռի** են և վերցնում են նաև **ուղիղ խնդիր**:

Այս բայերը կարող են և այլ իմաստներ արտահայտել, մենք նկատի ենք ունեցել միայն նրանց **տալու, մատուցելու** և նմանատիպ իմաստները:

Նշենք **շարժման և դադարման** մի բանի բայեր, որոնց պահանջով կազմվում են **ուղևորման և դադարման տեղի պարագաներ՝**

ա) **Ուղևորման** կամ **շարժման**, մի տեղից մեկ այլ տեղ տեղափոխություն ցույց տվող և ուղևորման հայցական վերցնող բայեր են՝ ածել, առաքել, արկանել, արձակել, արշաւել, բերել, գալ, գրոհ տալ, դառնալ, դարձ առնել, ելանել և այլն:

Այս կառք զարմանալիք... յամենայն **կողմանս** վարզին, ... **ընդ բնասս** սլանան (Եզն., 18): Յորժամ **ընդ արեւելս** ընթանան, չէ ինչ արգել՝ թէ **ընդ արեւմուտս** ոչ արշաւիցին, և յորժամ **ընդ հիւսիսի** վարզին, չէ ինչ արգել՝ թէ **ընդ հարաւ** ոչ սուրայցեն (Եզն., 18):

Որ ոք յերկուց որդուցն իմոց վաղ **առ իս** հասցէ՝ զնա թագաւոր արարից (Եզն., 114):

Ստեպ առաքէին դեսպանս **առ փիկին** աշխարհին **առ Փառանչեմ** (Բուզ., 144):

Որոց հասեալ **ի կողմանս** Կեսարու (Խոր., 184):

Հրաման տայ Սմբատայ՝ երթալ **յամուրն Բագարան** (Խոր., 175):

բ) **Դադարման բայեր՝**

ամրանալ, ամփոփել, առնել, բազմել, բանակել, բեւեռել, բնակել, բուսանել, գտանել, դադարել, դեգերել, դիգել, դիպել, դնել, երթևեկել, գեղուլ, գետեղել և այլն:

Ինչպես նկատելի է, այս բայերն արտահայտում են դադարման իմաստ, թեկուզ և այն դրված լինի «ներգոյական հոլովով», միաժամանակ կարող են պահանջել **մոտ, վրաս, տակ, միջով** իմաստներ դրսևորող տեղի պարագա:

... և ոչ գոք ի թագաւորագգեաց և ի դիւցազանց ունին կապեալ **առ իւրեանս** կենդանի (Եզն., 104):

Կարգէր և կազմէր զճակատն... **առ ափն** Տղմուտ գետոյնն (Եղ., 116):

Եզինն՝ ձմերանի **ընդ** ալուց **կողմն** նստելոյ և մօտ ի գարունն **ընդ** դրաց **կողմն** դառնալոյ (Եզն., 174):

Չեոք սրբոյն *ընդ երկինս* կարկառեալ էին¹⁵:

Այսինքն «*Սրբի շեռքերը դեպի երկինք էին կարկառված*» նախադասութիւնում *դադարման վիճակ է*: Իսկ եթէ լինէր «*չեոք սրբոյն ընդ երկինս* (կամ՝ *յերկինս*) կարկառեին» նախադասութիւն, *ընդ երկինս* կլինէր *ուղևորման հայցական* (=Սրբի ձեռքերը դեպի երկինք էին կարկառվում):

Տեսանենք և զկէսն *յանտառախիտ մայրիս* ամբացեալս (Եզն., 157):

Բեռեռեալ են *յերկինս* (Եզն., 199):

Հայցական հոլովով այսպիսի կառույցներ ունեցող տեղի պարագան ըստ կազմութեան բազմաձև է՝ հաճախ նախդիրների համանշային գործածութեամբ:

Իմաստային որևէ խմբի պատկանող և անգամ փոխաբերական իմաստով չգործածված բայերը տարբեր թեք հոլովներով վերցնում են այդ խմբին յուրահատուկ կոնկրետ և լրացուցիչ իմաստներ դրսևորող լրացումներ, ըստ որում՝ դրանք կարող են արտահայտվել նախդիրներով, նախադրութեամբ և առանց այս սպասարկու բառերի:

Այդ ապացուցելու համար ներկայացնենք իմաստային միևնույն խմբին պատկանող (շարժման բայեր) թեկուզ և մեկ բայի (*հասանել*) լրացումներն ըստ Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց» աշխատութեան:

1. Հասանէ *յեզր* ծովակի միոյ (35): Գայ հասանէ *յաշխարհին* Միջագետաց (144) (յ+ հայց., ուղևորման տեղ): 2. Հասանէ *առ սահմանօրն* Խաղտեաց (106) (*առ* + *գործ.*, մոտավոր տեղ): 3. Լուր հասանէ *առ Երուանդ* (169) (*առ* + հայց., հաղորդման անուղղակի խնդիր): 4. Գայ հասանէ հրովարտակ... *առ* մեր *արքայն* Տրդատ (239) (*առ* + *հայց.*, հանգում): 5.... յորում մերոյ իսկ բնիկ նախնոյն սերունդ *ի* թագաւորութեան հասանեն *յաստիճակ* (65): (*Հասանել* բայը դրվել է լրացում-լրացյալի միջև, *ի* (յ) նախդիրը դրա համար էլ կրկնվել է (*ի+ հայց.*, սահմանափակման անուղղակի խնդիր): 6. Յեղեսացոցն հասանեաք *քաղաք* (344) (տպ., ուղևորման անուղղակի խնդիր): 7. Յորժամ *ի շարի կարգին* հասանիցենք *ի ժամանակս* թագաւորին (145) (*ի* + *պրակական*, հանգում, *ի+ հայց.*, = ժպ.): 8. ... և ահ գորութեան ձերոյ եհաս *մինչև ի ժագս երկրի* (261) (*մինչև ի+* հայց., տպ.):

Ինդրառութեան դրսևորման համար, ինչպէս ասվեց, *կարևորվում է նաև լրացման իմաստը*: Անհրաժեշտութեան դեպքում հաշվի են առնվում նաև հոլովված բառերի խոսքիմասային պատկանելությունը¹⁵, բուն և հավելյալ բովանդակությունը, երբեմն՝ անձ և իր լինելու հանգամանքը (օրինակ՝ *առ, ընդ, ի(յ)* + հայցական՝ ուղևորման իմաստով, զոյականի վերացական կամ թանձրացական լինելը, հատուկ և հասարակ անուն լինելը, օրինակ՝ ներգոյականի իմաստով՝ *ի Տիգրանակերպ* և այլն:

Ժամանակի պարագա կազմելու համար կարևոր նշանակություն ունեն ժամանակակիչ բառերը՝

ամ, ամառն, ամիս, աշուն, առաւօտ, ար, գարուն, գիշեր, դար (= 100 տարի), երեկոյ, ժամ, ժամանակ, ձմեռ, նուազ (= ժամանակ), շաբաթ, տիւ, ցայգ, ցերեկ...

¹⁵ Կորիւն, «Եղծ աղանդոց», Եր., 1941, էջ 92:

* Գոյականակիչ դերանունները խնդիր դառնալիս հաճախ գործածվել են նախդիրների հետ, իսկ պարագայի պաշտոնում՝ նախդիրների և նախադրութիւնների հետ:

Շարաքվա օրերը՝ միաշարքաք // միաշարքի, (կիրակի // կիրակի), երկշարքաք // երկշարքի, երեքշարքաք, չորեքշարքաք // չորեքշարքի, հինգշարքաք // հինգշարքի, ուրբաք, շաբաք:

Ժամանակահիշ են նաև գործողության անուն արտահայտող որոշ գոյականներ՝ հարսնութիւն, հնումն, նորումն, նախնումն, բարկութիւն, մկրտութիւն, տղայութիւն, ծերութիւն, փեսայութիւն և այլն:

Տեղ ոսկի տեղայր **ի փեսայութեան** Արտաշիսի,

Տեղայր մարգարիտ **ի հարսնութեան** Սաթինկանն (Խոր., 179):

Ի նախդիր + անորոշ դերբայի հայցականը և՛ **ի փեսանէ, ի գրեւ, ի վազեւ...**

Ժամանակահիշ են նաղիրներով կազմված **ժամանակի մակբայները՝ առ** - առ երեկս, առ ժամանակ // առ ժամանակն // առ ժամանակ մի, **ընդ** - ընդ այգս, ընդ առաւօտն, ընդ երեկս, ընդ ժամանակս ժամանակս, մերք ընդ մերք,

ըստ - ըստ ժամանակս ժամանակս, ամ ըստ ամէ, օր ըստ օրէ և այլն:

Տեղի պարագա են դառնում **փեղանիշ հայրով և հասարակ գոյականները, փեղի մակբայները, գոյականահիշ դերանունները, գոյականաբար գործածվող այլ խոսքի մասեր** և այլն: **Տեղի պարագան զրաբարում հիմնականում կազմվում է նախդիրներով և նախադրություններով**, ըստ որում՝ բացի սեռական հոլովից, մյուս թեք հոլովներով և համպատասխան նախդրագործածությամբ է կազմվում:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Գրաբարում **նախդիրներ + թեք հոլովներ** կառույցներով կազմվել են ավելի քան 63 խնդրային և 44 պարագայական կիրառություններ. **խնդիրները 19-ով ավելի են, քան պարագաները, ընդամենը՝ 107:**

2. Ըստ հոլովների նվազող հաջորդականության՝ խնդիրները դասավորվում են՝ հայցական՝ 29, տրական՝ 16, գործիական՝ 8, բացառական՝ 7, սեռական՝ 3 գործածություն:

3. Ըստ հոլովների նվազող հաջորդականության՝ պարագաները դասավորվում են՝ հայցական՝ 17, տրական՝ 12, գործիական՝ 9, բացառական՝ 6 գործածություններ:

4. Խնդրային և պարագայական կիրառությունների համամասնության ընդհանուր պատկերն այսպիսին է՝:

Նախդիրներ	Խնդիրներ	Պարագաներ	Ընդամենը
Առ	15	11	26
Զ	6	5	11
Ընդ	22	9	31
Ըստ	4	7	11
Ի(յ)	10	10	20
Ց	3	—	3
Ընդամենը՝ 6	60	43	103

* Չեն հաշվարկվել՝

ա) Զ նախդիրը հայցական հոլովի հետ՝ որոշյալ առման դրսևորմամբ,

բ) Ի (յ) նախդիրը բացառական հոլովի կազմում:

5. Նախդրագործածության համընդհանուր քննությունը ցույց է տալիս, որ հիմնականում միևնույն նախդիրը նույն և տարբեր թեք հոլովների հետ կարող է դրսևորել նույն և տարբեր խնդիրներ ու պարագաներ՝ որոշ բացառությամբ:

Խնդիրներ կազմելու առումով առավել գործուն են **ընդ** (24 անգամ) և **սո** (15), պարագաներ կազմելու առումով՝ **սո** (12) և **ի (յ)** (10) նախդիրները:

Եթե առանձնացնենք **ց** նախդիրը, որը դրվելով միայն հայցական հոլովի հետ, իմաստային բավականին սակավ դրսևորումներ է կազմում, պակաս գործածություն ունեն **զ** և **ըստ** նախդիրները:

Այստեղ նկատի չունենք նախդրագործածության հաճախականությունը, որտեղ առավել շատ գործածություն ունեն **զ** և **ի** նախդիրները:

6. Քանի որ նույն նախդիրը հաճախ կարող է միևնույն իմաստն արտահայտել տարբեր հոլովներով, ինչպես նաև տարբեր նախդիրներ կարող են նույն իմաստը դրսևորել նույն և տարբեր հոլովներով, առաջանում է նախդիրների հոմանշային գործածության լայն հնարավորություն:

7. Կան դեպքեր նաև, երբ մի նախդիրը գործածվում է մեկ այլ նախդիրի փոխարեն՝ առանց իմաստային որևէ փոփոխության: Չի բացառվում, որ նախագրաբարյան շրջանում ինչպես այս, այնպես էլ նախդրային այլ կիրառություններ ունեցել են տարբերակման հիմունքներ, սակայն գրաբարի շրջանում դրանք ամբողջովին կամ էլ մասնակիորեն համահարթվել են: Այսպես, **ըստ**, **ընդ**, **սո** (մասնակիորեն) նախդիրները, իհարկե, ոչ հաճախ, փոխարինել են բացառականի **ի(յ)** նախդրին՝ առանց իմաստային փոփոխություն առաջացնելու:

Г. М. МАНУКЯН — Предложные конструкции приглагольных членов предложения. — В грабаре предложные конструкции в основном подчиняются глаголу. Они образуются в результате процесса, в котором существенную роль играет сам глагол, косвенные падежи, склоняемое слово и соответствующие предлоги. В статье рассматривается этот вопрос. Теоретические выводы делаются на основании примеров, взятых из древних армянских источников. Впервые на этом материале составлены таблицы.